

Արձանագրություն հ. 6

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի
25.06.18 թ. կայացած նիստի

Նիստին մասնակցում էին ֆակուլտետի գիտական խորհրդի 36 անդամներից 30-ը:

Օրակարգում՝ Մրցույթ:

<<Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների>> ամբիոնի վարիչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթին մասնակցում էին երկու թեկնածուներ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Մարկոսյանը և տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր, նույն ամբիոնի վարիչի պաշտոնակատար Գագիկ Գալստյանը, պրոֆեսորի մեկ տեղի համար դիմել էին 3 հոգի՝ Ս.Նավոյանը, Թ.Թորոսյանը և Վ.Հովսեփյանը, իսկ դոցենտի 2 թափուր տեղի համար դիմել էին երկուսը՝ Հ.Հովհաննիսյանը և Գ.Հայրապետյանը:

<<Կառավարման և գործարարության ամբիոնի>> պրոֆեսորի պաշտոնը զբաղեցնելու համար կար մեկ թեկնածու՝ պրոֆ. Ա. Սարիբեկյանը, դոցենտի 2 տեղի համար դիմել էին երկուսը՝ Ա.Գալստյանը և Ա.Հակոբջանյանը:

<<Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման>> ամբիոնի դոցենտի 2 թափուր տեղի համար դիմել էին երկուսը՝ Ս.Սարգսյանը և Ն.Քոչինյանը:

Ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ պրոֆ. Հ.Մնացականյանը ներկայացրեց մրցույթի մասնակիցների անձնական գործերը և մրցութային հանձնաժողովի որոշումը այն մասին, որ մրցույթի բոլոր մասնակիցները թույլատրվում են մասնակցելու խորհրդի նիստի քննարկմանը:

Որոշեցին մրցույթին դիմած թեկնածուներին թույլատրել մասնակցելու փակ, գաղտնի քվեարկությանը: Ինքաբացարկ հայտարարեց Վ.Հովսեփյանը:

Որոշեցին ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ Ս.Ղանթարջյան /նախագահ/, Գ.Բարխուդարյան. Ի.Վարդանյան:

Լսեցին հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ս.Ղանթարջյանի հաղորդումը քվեարկության արդյունքների մասին:

Քվեարկության արդյունքները հետևյալն են.

| | |
|------------------------------|------------------------------|
| Գալստյան Գագիկ Սերգեյի | 15 կողմ, 14 դեմ, 1 անվավեր, |
| Մարկոսյան Աշոտ Խաչատուրի | 14 կողմ, 15 դեմ, 1 անվավեր, |
| Դավոյան Սամսոն Աշոտի | 18 կողմ, 11 դեմ, 1 անվավեր, |
| Թորոսյան Թորոս Շահենի | 10 կողմ, 19 դեմ, 1 անվացվեր, |
| Սարիբեկյան Ամալյա Սարիբեկի | 27 կողմ, 3 դեմ, 0 անվավեր, |
| Գալստյան Ամալյա Ռոմենի | 29 կողմ, 1 դեմ, 0 անվավեր, |
| Հակոբջանյան Աննա Հովիկի | 27 կողմ, 3 դեմ, 0 անվավեր, |
| Հայրապետյան Գրիգոր Ռաֆայելի | 25 կողմ, 5 դեմ, 0 անվավեր, |
| Հովհաննիսյան Հասմիկ Վաղինակի | 29 կողմ, 1 դեմ, 0 անվավեր, |
| Սարգսյան Սոնա Հայկի | 30 կողմ, 0 դեմ, 0 անվավեր |
| Քոչինյան Նարինե Մինարայի | 30 կողմ, 0 դեմ, 0 անվավեր: |

Ամբիոնների վարիչների համար կազմակերպվեց կրկնակի քվեարկություն, սակայն թեկնածուների բացակայության և քվորում չլինելու պատճառով նիստը նրանց մասով համարվեց չկայացած:

Որոշեցին հաստատել ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկության արդյունքները և ներկաների կեսից ավելի ձայներ հավաքած թեկնածուներին համարել ընտրված համապատասխան պաշտոններում:

Գիտլսարհորդի նախագահ,
ու.գ.դ., պրոֆեսոր

Գիտլսարհորդի քարտուղար,
ու.գ.թ., պրոֆեսոր



Հ.Լ.Սարգսյան

Ա. Հ. Համբարձումյան